ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐԱՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**

**15.10.2019Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են Ն. Բաբայանը,Հ.Գրիգորյանը, Տ.Եփրեմյանը,Ն.Վարդանյանը, Գ.Երիցյանը,Ա.Փանոսյանը:

***<u>Նիստը վարում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>***

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝ ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

***<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>***

Հաստատել համայնքի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>***

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ -9** **դեմ - 0** **ձեռնպահ -0**

***Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

1. ***Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման 3-րդ եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի.՝***առաջարկում եմ*** ,հաստատել Չարենցավան համայնքի 2019 թվականի 3-րդ եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը:

***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

**2 *Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին :***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ առաջարկում եմ. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 87-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

***1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝***

ա. 7422 «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «74634.9» թիվը փոխարինել «75134.9» թվով,

***2) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.***

**ա**. 0981 «Կրթություն /այլ դասերին չպատկանող/» - ի 4823 «Պարտադիր վճարներ» սինթետիկ հաշվին հատկացնել 500,0 հազ. դրամ:

***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ - 9** **դեմ - 0** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:***

***/Զեկ. Վ.Չիլինգարյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով՝***առաջարկում եմ*** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի.

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵՆ | ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ | ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ | ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Նարեկ Մարգարյան | 2-2-34 | 4 200 000 | Սեփականություն | Անհատույց |

2. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-9** **դեմ - 0** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***4.Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:***

***/Զեկ. Բ.Բալբաբյան/***

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ***առաջարկում եմ*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասը աճուրդային կարգով օտարելու՝ համաձայն հավելվածի:

***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-9** **դեմ-0** **ձեռնպահ-0**

**Բաբայան Վալերի**

**Գասպարյան Անատոլի**

**Գասպարյան Մելիք**

**Դավթյան Կարեն**

**Խլղաթյան Արսեն**

**Պողոսյան Մնացական**

**Սահակյան Երեմ**

**Վարդանյան Նորայր**

**Վարդանյան Սարգիս**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

**Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան** _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ**